# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«30» «օգոստոսի» **2023 թվական N 2171 -Ա**

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի $219^{1}$ հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 11:35-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Տերյան 1-ին նրբանցք, տուն 19 ա, անձնագիր՝ AT 0463004 տրված՝ 20.09.2019 թվականին 064-ի կողմից) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմված, քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Կ.Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 07-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ

հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 07-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից Գյումրի քաղաքի, Տերյան փողոցի 1-ին նրբանցք, թիվ 9/1 հասցեում առանց համապատասխան թույլտվության կատարվել է ինքնակամ շինարարական աշխատանք, մասնավորապես՝ տան հյուսիսային հատվածում բացվել է պատուհան, այսինքն քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանը 2023 թվականի օգոստոսի 24-ին ժամը 10:45-ի սահմաններում ներկայանալով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժին խնդել է, որ վարչական վարույթի լսումները անցկացվեն իր բացակայությամբ, փաստը հավաստվում է քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից կատարված գրառումով և ստորագրությամբ:

Արձանագրությանը կից ներկայացված նյութերում առկա է Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված քաղաքացի՝ Թամարա Կարապետյանի 2023 թվականի հուլիսի 27-ի դիմումը, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 2023 թվականի մայիս ամսին:

Քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 07-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 37-րդ, 247-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2-րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանին սույն որոշումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Պարույր Ավետիսի Աֆրիկյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«30»«օգոստոսի» 2023 թվական N 2170-Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի $219^{1}$ հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 11:25-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի (հասցե՝ ՀՀ ք.Երևան, Քանաքեռցու 14 փողոց, տուն 24 անձնագիր՝ AV 0589110 տրված՝ 09.01.2023 թվականին 013–ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 11–ին կազմված, քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Ս.Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 11–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ

հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 10-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի կողմից Գյումրի քաղաքի, Պռոշյան փողոցի, 73 շենքի, թիվ 41-42 հասցեի բնակարանի հարավային հատվածում առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ պատուհանը վերածել է դռան, այսինքն քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Գործի նյութերում առկա է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, որի համաձայն՝ Գյումրի քաղաքի, Պռոշյան փողոցի, 73 շենքի, թիվ 41-42 բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանին և Ալիսա Ռուբենի Ռուբինյանին:

Քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Վարչական վարույթի լսումներին ներկա է գտնվել նաև՝ Գյումրի քաղաքի «Կումայրի» պատմամշակութային արգելոց թանգարան ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ինգա Էդուարդի Ավագյանը, ով հայտնեց, որ Գյումրի քաղաքի Պռոշյան 73 շենքը ներառված է անշարժ հուշարձանների ցանկում, որպես տեղական նշանակության հուշարձան: Ինգա Ավագյանը հայտնեց նաև, որ անընդունելի է Գյումրի քաղաքի, Պռոշյան փողոցի թիվ 73 շենքի արտաքին որևէ փոփոխություն, քանի որ փոփոխությունը խաթարում է հուշարձան կառույցի տեսքը:

Քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ շինարարական աշխատանքները կատարվել են 2023 թվականի մայիս ամսին, ինչպես նաև՝ պատրաստակամություն հայտնեց վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

Քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանը կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 11-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց

հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247–րդ հոդվածի 7–րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37–րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 37-րդ, 247–րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանին սույն որոշումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«30» «օգոստոսի» 2023 թվական N 2169 –Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24–ին, ժամը 11:25-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հաղթանակի պողոտա, տուն 124 անձնագիր՝ AR 0419735 տրված՝ 10.08.2017 թվականին 064–ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 10–ին կազմված, քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից Օրենսգրքի 154–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Ս.Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 10–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ

հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 10-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից Գյումրի քաղաքի, Հաղթանակի Պողոտա թիվ 124 հասցեի արևելյան հատվածում առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ ավտոտնակը վերափոխել է տաղավարի, այսինքն քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով:

Քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է փոստային ծառայության միջոցով:

Վարչական վարույթի լսումներին ներկա է գտնվել նաև՝ Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա թիվ 122 տան բնակչուհի՝ Արմենուհի Միրիջանյանը:

Քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ պատրաստակամ է վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

Արձանագրությանը կից ներկայացված նյութերում առկա է Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված քաղաքացի՝ Արմենուհի Միրիջանյանի 2023 թվականի օգոստոսի 01-ի դիմումը, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 2012 թվականին, քաղաքացի՝ Արմենուհի Միրիջանյանը ներկա գտնվելով վարչական վարույթի լսումներին, կրկին անգամ հաստատեց, որ շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 2012 թվականին:

Քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 10-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ

սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247–րդ հոդվածի 7–րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37–րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 37-րդ, 247–րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանին սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Հովհաննես Հայկազի Մելիքյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» օգոստոսի 2023 թվականի N 2167-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,

3) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«29» օգոստոսի 2023 **թվականի** N 2167-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման վերադաս՝ Ալբերտ Մարգարյան – Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.08.2023

**2023թ. ք. Գյումրի** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«29» օգոստոսի 2023 թվականի №2166-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 58Ե ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №16082023-08-0016) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալեքսան Կիրակոսյանի լիազորված անձ Նարինե Ալեքսանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 17461 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց, 58ե բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №16082023-08-0016) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 58/9 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» օգոստոսի 2023 թվականի №2165-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ 4/8 (ՎԿԱՅԱԿԱՆ №20062023-08-0010) ԵՎ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ 2/16 (ՎԿԱՅԱԿԱՆ №25072023-08-0021) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղարսի խճուղի 4/8 (վկայական №20062023-08-0010) և Կարսի խճուղի 2/16 (վկայական №25072023-08-0021) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 4/8 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» օգոստոսի 2023 թվականի N 2164-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԼԲԵՐՏԻ ԵՂՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱՐԱՑ 4-ՐԴ ՇԱՐՔ № 10 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 67.16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 394.40 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանին պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի հողամասին կից ավել օգտագործում է 394.4 (երեք հարյուր իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 67.16 (վաթսունյոթ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023NQNRVL, 2023DBAJT3, 2023YKMTEA ծածկագրերով մուտքագրման տեղեկանքները և քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 24-ին № 9831 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանի (ծնված 1976 թվականի դեկտեմբերի 24-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանին պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի տան հողամասին կից սահմանված չափից ավել օգտագործվող 94.4 (իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանին տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 645130 (վեց հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 94.4 (իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանին պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 67.16 (վաթսունյոթ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.08.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«29» օգոստոսի 2023 թվականի №2163-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 208,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0083-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում գտնվող 208,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0083-0001) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, 15/1 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**« 28 » օգոստոսի 2023 թվականի N - 2162 - Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 266-Ն որոշման 2-րդ կետով՝

**Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի NN 3,4 հատվածներում կատարել վերաբաշխումներ՝ համաձայն NN 1,2 հավելվածների:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված վերաբաշխումները կատարել օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի 2023թ [illegible]
N [illegible] որոշման

# ՀԱՏՎԱԾ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| ողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | | Ըստ եռամսյակների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | 3-րդ | 4-րդ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 9 | 10 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700) | x | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 0.0 | 0.0 | X | 43,000.0 | 0.0 |
| 4212 | -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 0.0 | 0.0 | X | -26,000.0 | -1,000.0 |
| 4252 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 0.0 | 0.0 | X | 300.0 | 300.0 |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 0.0 | 0.0 | X | 700.0 | 700.0 |
| 4312 | -Ներքին վարկերի տոկոսավճարներ | 4412 | 0.0 | 0.0 | X | -18,000.0 | 0.0 |

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ. ... - 28-ի
N 2162-Ա որոշման

ՀԱՏՎԱԾ 4

# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ըստ եռամսյակների 3-րդ | 4-րդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2110 | 01 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | որից՝ | | | | | | |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Էներգետիկ ծառայություններ | 4212 | | 0.0 | | -1,000.0 | -1,000.0 |
| | | | | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 4252 | 0.0 | 0.0 | | 300.0 | 300.0 |
| | | | | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 0.0 | 0.0 | | 700.0 | 700.0 |
| 2160 | 01 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Ներքին վարկի տոկոսավճարներ | 4412 | | | | -18,000.0 | 0.0 |
| 2500 | 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550+տող2560) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2510 | 05 | 1 | 0 | Աղբահանում | | | | | | |
| 2511 | 05 | 1 | 1 | Աղբահանում | | | | | | |
| | | | | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | | | | 38,000.0 | 0.0 |
| 2600 | 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2640 | 06 | 4 | 0 | Փողոցների լուսավորում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 0.0 | 0.0 | | -25,000.0 | 0.0 |
| 2660 | 05 | 6 | 0 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | | | | 5,000.0 | 0.0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» «օգոստոսի» 2023 թվականի N2161-Ա

**ԼԻԼԻԹ ԿԱՐԼԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼՈՒՍԱՍՏՂԻԿ -ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Լուսաստղիկ – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 24-ի N 5 որոշումը, Լիլիթ Կարլենի Ավետիսյանի 2023 թվականի օգոստոսի 25-ի դիմումը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Լուսաստղիկ – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Կարլենի Ավետիսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ 2016 թվականի հունիսի 01-ին կնքված N 877-Ա աշխատանքային պայմանագիրը:
2. Լիլիթ Կարլենի Ավետիսյանին (ծնված՝ 1975 թվականի հուլիսի 25-ին, նույնականացման քարտի համար՝ 004196135, տրված՝ 2015 թվականի մարտի 06-ին, ՀՀ ոստիկանության 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Գյումրի, Շիրակացու փ., շ. 62, բն.18, հանրային ծառայությունների համարանիշ՝ 7507750337) 2023 թվականի օգոստոսի 29-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Լուսաստղիկ – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

3. Լիլիթ Կարլենի Ավետիսյանի հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

4. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Կարլենի Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2023 թվականի N 2160-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1829 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 1922-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1829-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման 3-րդ կետում «0229» թիվը փոխարինել «0029» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թելման Աշոտի Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.08.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2023 **թվականի** N 1159 Ա

### 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ՏՐՎԱԾ N12/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Յայգ» ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Աբովյան փողոց №248/23 հասցեում ձեղնահարկի կառուցման համար 2023 թվականի հունվարի 30-ին տրվել է N12/23 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 160/հարյուր վաթսուն/ օր:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 4/չորս/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2023 թվականի հունվարի 30-ին տրված N12/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 4/չորս/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

28.08.2023

x

**2023թ. ք.Գյումրի** Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2023թվականի N2158 Ա

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի 8.1-ին և 8.4-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել 2023 թվականի օգոստոսի 29-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի բաժնի առաջատար մասնագետների, ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

28.08.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2023 թվականի № 2157 Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 44 ՏԵՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №0109451) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Ալեքսանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17567 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Արևելյան թաղամաս, 44 տեղամաս, բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №0109451) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 44 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

28.08.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2023 թվականի N 2156-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 1714-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվելիք աշխատակիցների ցուցակը հաստատելու մասին>> N 1525-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետում <<Առուշանյան Դավիթ>> բառերը փոխարինել <<Մկրտչյան Վահագն>> բառերով.

2) 14-րդ կետում <<պետի ժամանակավոր պաշտոնակատար>> բառերը փոխարինել <<պետ>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Մկրտչյանին և Շողիկ Ալեքսանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի 2023

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» օգոստոսի 2023 **թվականի** N 2155-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ 334,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 21-ին կազմակերպվել է Թբիլիսյան խճուղի N 2/17 հասցեով (ծածկագիր 08-001-1206-0067) 334,0 (երեք հարյուր երեսունչորս) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Կարեն Գուրգենի Վարդանյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 10000000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 58):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թբիլիսյան խճուղի N 2/17 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 334,0 (երեք հարյուր երեսունչորս) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1206-0067) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Կարեն Գուրգենի Վարդանյանին սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Կարեն Գուրգենի Վարդանյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Կարեն Գուրգենի Վարդանյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի №1976–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, 158/183 հասցեագրությամբ հաշվառած տնակի զբաղեցրած 356,69 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1210-0072, 0003) և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 148,59 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 38/4 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2023 թվականի № 2131-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 99 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԱՌԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 94,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 11-ի №2048–Ա որոշումը, հողամասի ու շինության հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Շահումյան փողոց, 99 հասցեագրությամբ հաշվառած բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած 94,8 քառակուսի մետր մակերեսով հողամասին համայնքի իրավունքները պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 99/4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի № 2130-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՆՋՈՅԱՆ ՓՈՂՈՑ 5/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №19022014-08-0009), ՄՆՋՈՅԱՆ ՓՈՂՈՑ 5/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №16082023-08-0042) ԵՎ ՄՆՋՈՅԱՆ ՓՈՂՈՑ 5/4 (ՎԿԱՅԱԿԱՆ №16082023-08-0021) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մկրտիչ Հովհաննիսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17303 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Մնջոյան փողոց 5/2 (վկայական №19022014-08-0009), Ա. Մնջոյան փողոց 5/3 (վկայական №16082023-08-0042) և Ա. Մնջոյան փողոց 5/4 (վկայական №16082023-08-0021) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՄՆՋՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 7 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2023 թվականի №2129-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ՇԵՆՔ 67Ա, 9 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №03072023-08-0047) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Սահրադյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17158 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված շինությունների բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ա. Մանուկյան փողոց, 1-ին նրբանցք, շենք 67ա, 9 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №03072023-08-0047) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 65.34 քառակուսի մետր մակերեսով շինությունը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 67Ա ՇԵՆՔ, 9 ԲՆԱԿԱՐԱՆ**
2. 14.24 քառակուսի մետր մակերեսով շինությունը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 67Ա ՇԵՆՔ, 9/1 ԲՆԱԿԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X ________ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2023 թվականի №2128-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 821,62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 195,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի №1968–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ գտնվող 821,62 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 195,48 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 16 ՀՈՂԱՄԱՍ**

25.08.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2023 թվականի №2127-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 127,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 76,94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 02-ի №1923–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 127,5 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 76,94 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 3/7 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«25» Օգոստոսի 2023 թվականի №2126-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 416,01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 123,55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 02-ի №1925-Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 416,01 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 123,55 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ, 42/3 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. . Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2023 թվականի №2125-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 178,18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 91,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 02-ի №1924-Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղադաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 178,18 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 91,48 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել ՀԱՍՑԵ՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 30 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» [illegible] 2023 **թվական** N 2124-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՀԱՐԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանը (անձնագիր AT 0292224, տրված՝ 29.10.2019թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վարդ-բաղ 2թ/դ 1մ/2 5շենք, 17 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի օգոստոսի 10-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ բաղ 1մ/2 2 թաղ. 5 շենք թիվ 17 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1989 թվականի մարտի 17-ի թիվ 6 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1մ/2 2 թաղամաս 5 շենք 17 բնակարանը հատկացվել է Գոհարիկ Արտավազդի Թորոսյանի 2 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, տղային:

Քաղաքացի Արտյոմ Դավիթ Թորոսյանը մահացել է (հիմք՝ ԱԲ 275448 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1989 թվականի մարտի 17-ի թիվ 6 որոշմամբ տրված թիվ 17 միասնական օրդերը, 2023 թվականի հուլիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230168016355 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1651 տեղեկանքները, Գոհարիկ Արտավազդի Թորոսյանի անձնագրի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023թվականի օգոստոսի 10-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 11-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Ք. Գյումրի Վարդ- բաղ 2թաղ. 5 շենք թիվ 17 հասցեի 63.61 (վաթսուներեք ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1148323 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1մ/շ 2 թաղ. 5 շենք թիվ 17 հասցեի բնակարանը 1989 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1989 թվականի մարտի 17-ի թիվ 6 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1մ/շ 2թաղամաս 5 շենք 17 հասցեում հաշվառված բնակվում է Գոհարիկ Արտավազդի Թորոսյանը 1989 թվականից (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 22-ի՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230168016355 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1651 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր նրա կողմից անշարժ գույքի օտարման և ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 10-ի N ԱՏ-10082023-99-0263 տեղեկանք):

զ) Քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ Բաղ 2 թաղամաս 1մ/շ 5 շենք թիվ 16 հասցեի բնակարանը վարձակալել է 1989 թվականի մարտի 17-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին

և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանի դիմումը բավարարեց մասամբ:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ք. Գյումրի Վարդ- բաղ 2թաղ. 5 շենք թիվ 17 հասցեի 63.61 (վաթսուներեք ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Գոհարիկ Արտավազդի Թորոսյանին ծնված՝ 1956 թվականին

որպես սեփականություն :

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանին :
3. Քաղաքացի Գոհարիկ Արտավազդի Թորոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Գոհարիկ Արտավազդի Թորոսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2023թ. ք. Գյումրի** **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

**փոխարինող**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2023 թվականի № 2123Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑ, 3Զ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2162921) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սոնա Վարդերեսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17205 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ծննդատան փողոց, 3զ հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2162921) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑ, 9/4 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«24» օգոստոսի 2023 թվականի N 2122 Ա

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԻՏԱ ԼԵՎՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ՍԵՐՅՈԺԱ ՄԿՐՏԻՉԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի հուլիսի 18-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ 3-րդ շարք 16 տան բնակիչ՝ Ալիտա Լևոնի Հակոբյանը (նույնականացման քարտ՝ 009588757) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված որդու՝ 16.06.2000 թվականին ծնված Սերյոժա Մկրտիչի Սարիբեկյանի (նույնականացման քարտ՝ 009249228) նկատմամբ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2023 թվականի թիվ ՇԴ/6630/02/21 վճռով Սերյոժա Մկրտիչի Սարիբեկյանը ճանաչվել է անգործունակ:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 11.07.2023 թվականին տրված տեղեկությունների համաձայն դիմումատու՝ Ալիտա Լևոնի Հակոբյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

«Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն Ալիտա Լևոնի Հակոբյանը իր որդու՝ Սերյոժա Մկրտիչի Սարիբեկյանի հետ բնակվում են Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ 3-րդ շարք 16 տանը (հիմք՝ տեղեկանք, N.1462 տրված՝ 13.07.2023 թվականին):

Ելնելով անգործունակ ճանաչված Սերյոժա Մկրտիչի Սարիբեկյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Ալիտա Լևոնի Հակոբյանի 2023 թվականի հուլիսի 18-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 14976 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 24-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել խնամակալություն՝ Ալիտա Լևոնի Հակոբյանին (նույնականացման քարտ՝ 009588757) նշանակել խնամակալ թիվ ԾԴ/6630/02/21 վճռով անգործունակ ճանաչված իր որդու՝ 16.06.2000 թվականին ծնված Սերյոժա Մկրտիչի Սարիբեկյանի (նույնականացման քարտ՝ 009249228) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալիտա Լևոնի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոսի 2023 թվականի N 2121-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 1438-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 13-ի «Խնամակալություն սահմանելու և քաղաքացի Սամվել Մամիկոնի Մուրադյանին իր թոռան՝ Նեֆելի Գագիկի Մուրադյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» թիվ 1438-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Մամիկոնի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«24» օգոստոսի 2023 թվականի N2120-Ա

**<<ԵՎՐՈՊԱ-7>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ,ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N3/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 35,36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 37,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

<< Եվրոպա -7>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գ Նժդեհի փողոց N3/5 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 35,36 (երեսունհինգ ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն, 37,31( երեսունյոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտ:

<< Եվրոպա -7>> ՍՊԸ -ն դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ (մուտքագրված համայնքապետարանում 2802.2023թ. թվականի N 3374թվագրմամբ) նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով, որը կադաստրի կոմիտեի կողմից հաշվառված է՝ 2023L7GSQC ծածկագրով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի, ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. << Եվրոպա -7>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գ Նժդեհի փողոց N3/5 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 35,36 (երեսունհինգ ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, 37,31( երեսունյոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտը ճանաչել օրինական տեղական բյուջե ենթակա է գանձման 299696( երկու հարյուր իննսունինը հազար վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում << Եվրոպա - 7>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.08.2023

X [signature]

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

**«24» Օգոստոսի 2023 թվականի N2119Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀՄԱՅԱԿ ԿՈՍՏԱՆԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ N 288 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 408,74 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ 98,23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հմայակ Կոստանի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 288 հասցեի տան, օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 408,74 (չորս հարյուր ութ ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Հմայակ Կոստանի Զաքարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով համաձայն կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Հմայակ Կոստանի Զաքարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 22.06.2023թ. N12668 թվագրմամբ)՝ կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023PSUKHJ ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Հմայակ Կոստանի Զաքարյանի սեփականության իրավունքը (ծնված 1947 թվականի հոկտեմբերի 1-ին) սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 288 հասցեի տան հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Հմայակ Կոստանի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 288 հասցեի տան կից, սահմանված չափից ավել օգտագործվող 108,74 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունչորս հարյուրերերդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի ՝ Հմայակ Կոստանի Զաքարյանին տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 314041 (երեք հարյուր տասնչորս հազար քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 108,74 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունչորս հարյուրերերդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր ( պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

24.08.2023

X [signature]

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոսի 2023 **թվականի** N 2118-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՓՈՂՈՑ N 2/4 ՀԱՍՑԵԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Աղասի Մաթևոսյանի (լիազորված անձ Գրիգոր Մաթևոսյանի) դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին N 16382 թվագրմամբ) և հիմք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 10.07.2023 թվականի N Կ-10072023-08-0127 որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Չեղարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Ալավերդյան փողոցի N 2/4 հասցեի վկայականը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 29122020-08-0023 վկայականը չեղարկելու համար:

24.08.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«24» օգոստոսի 2023 թվականի N2117-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի N 1952-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 04-ի <<Քաղաքացի Ստեփան Սերոբի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց 70 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 192.85 քառակուսի մետր արտաքին (157.25 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին>> N 1952-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 04-ի <<Քաղաքացի Ստեփան Սերոբի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց 70 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 192.85 քառակուսի մետր արտաքին (157.25 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին>> N 1952-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Որոշման 1-ին կետում <<կառուցված>> բառից հետո լրացնել <<192>> թիվը:

24.08.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոսի 2023 **թվականի** N 2116-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԼ.ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ N 2/14 ՀԱՍՑԵԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Լուսինե Փահլևանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 24-ին N 15455 թվագրմամբ) և հիմք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 05.05.2022 թվականի N Կ-05052022-08-0103 որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Չեղարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Ալ.Մանուկյան փողոցի N 2/14 հասցեի վկայականը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 03092012-08-0240 վկայականը չեղարկելու համար:

24.08.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** x ______ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոսի 2023 թվականի N 2115Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 2 1/1 ՀԱՍՑԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանի (ՀՎՀՀ՝ 57217502, գրանցման ամսաթիվը՝ 25.09.1998 թ.) 2023 թվականի օգոստոսի 21-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 21-ին 17278-2023 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոց 2 1/1 հասցեի ընդհանուր օգտագործման տարածքում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին իրականացնել հանրային սննդի ծառայության կազմակերպում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հոկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.08.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոսի 2023 թվականի N 2114-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՇԱՆԹ ՀՐԱԴ ԱԼԱՀ ԲՈՁԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Շանթ Հրադ Ալահ Բոզանյանի (ՀՎՀՀ՝ 28171363, գրանցման ամսաթիվը՝ 20.03.2023 թ.) 2023 թվականի օգոստոսի 22-ին ներկայացրած հայտը համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 22-ին 17425-2023 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Շանթ Հրադ Ալահ Բոզանյանին Գյումրի քաղաքի Ռուսթավելի 27 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Շանթ Հրադ Ալահ Բոզանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.08.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» օգոստոսի 2023 **թվականի** N2113-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 1627-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17 -Ի N 976-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի <<Քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N 151 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 145,27 քառակուսի մետր մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 10,6 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 976-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 26/07/2023 թվականի N Կ-26072023-08-0091 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի <<Քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N 151 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 145,27 քառակուսի մետր մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 10,6 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 976-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) վերնագրում, նախաբանում և որոշման 2-րդ կետում <<145,27(մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<143,42(մեկ հարյուր քառասուներեք ամբողջ քառասուներկու հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   2) վերնագրում, նախաբանում <<10,6(տասն ամբողջ վեց տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<9,9(ինն ամբողջ ինը տասնորդական)>> թվով և բառերով .
   3) որոշման 1-ին կետում <<հողամասի>> բառից հետո լրացնել <<և նրա վրա առկա շինությունների>> բառերը.

4) որոշումը լրացնել $1^1$. կետով հետևյալ բովանդակությամբ.

5) <<$1^1$. Ճանաչել քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանի (ծնված 1939 թվականի նոյեմբերի 05-ին) և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N 151 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 8,7 (ութ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով անկառուցապատ հողամասի նկատմամբ:>>.

6) որոշման 1-ին կետում <<10,6(տասն ամբողջ վեց տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<1,2(մեկ ամբողջ երկու տասնորդական)>> թվով և բառերով.

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի N 976-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 2023 թվականի հունիսի 28-ի N 1627-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**